ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/53085-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-324-23.10.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1673 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-324-23.10.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-324-23.10.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ ներկայացնում է հետևյալ դիտողությունները՝

1. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ՝

1) նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է «Առևտրի և ծառայությունների մասին» (այսուհետ՝ օրենք) օրենքով սահմանված՝ շրջիկ առևտրի կետի հասկացությունը շարադրել նոր խմբագրությամբ, ըստ որի՝ շրջիկ առևտրի կետն ապրանքների և մանրածախ առևտրի, ինչպես նաև ծառայությունների մատուցման համար համապատասխան սարքավորումներով ապահովված միայն ավտոմոբիլները և (կամ) դրանց կցորդներն են:

Հարկ է նշել, որ ներկայումս օրենքում սահմանված շրջիկ առևտրի կետի հասկացությունն առավել ընդգրկուն է, մասնավորապես՝ օրենքի իմաստով շրջիկ առևտրի կետ են համարվում ապրանքների պահման և մանրածախ առևտրի համար համապատասխան սարքավորումներով ապահովված ավտոկրպակները, մոտոկրպակները, ավտոսայլակները, մոտոսայլակները, ավտոցիստեռնները և այլն: Այս կապակցությամբ նախագծի հիմնավորումից պարզ չէ՝ ինչով է պայմանավորված շրջիկ առևտրի կետ բացառապես ավտոմոբիլները և (կամ) կցորդները համարելու վերաբերյալ կարգավորում նախատեսելու անհրաժեշտությունը.

2) նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 5.3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցիչը կազմում է շրջիկ առևտրի կետը կամ

տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու վերաբերյալ արձանագրություն, որի կրկնօրինակը հանձնում կամ ուղարկում է շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը՝ վերջինիս վերաբերյալ տեղեկատվություն ունենալու դեպքում և Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, ինչպես նաև համապատասխան հայտարարություն է տեղադրվում www.yerevan.am կայքում:

Այս կապակցությամբ հարց է ծագում՝ ինչ եղանակով պետք է ապահովվի շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ՝ պատշաճ ծանուցված լինելու և, համապատասխանաբար, վարչական վարույթի ընթացքում լսված լինելու իրավունքներն այն դեպքում, երբ Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցիչը վերջինիս վերաբերյալ որևէ տեղեկատվության չի տիրապետում. Արդյոք արձանագրության կրկնօրինակը ոստիկանությանը հանձնելու, ինչպես նաև հայտարարությունը համապատասխան կայքէջում տեղադրելու դեպքում անձը կարող է համարվել կազմված արձանագրության մասին պատշաճ ծանուցված, թե՝ ոչ:

Հարկ է նշել, որ օրինակ՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18.1-ին հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ արձանագրության կրկնօրինակը հանձնվում է այն անձին, որի նկատմամբ կիրառվել է հարկադրանքի միջոցը, իսկ հատուկ տարածք տրանսպորտային միջոցի տեղափոխման դեպքում՝ նաև հատուկ տարածքում տրանսպորտային միջոցի պահպանման համար պատասխանատու անձին:

Նշված կարգավորումից բխում է, որ ցանկացած դեպքում արձանագրության կրկնօրինակն այն անձին հանձնելը, ում նկատմամբ կիրառվել է հարկադրանքի միջոցը, տրանսպորտային միջոցները հատուկ տարածք բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու դեպքում պարտադիր է:

Միևնույն ժամանակ հստակեցման կարիք ունի նշված դրույթում օգտագործվող «տեղեկատվություն» եզրույթը.

3) նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 5.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և այլ ընդհանուր օգտագործման տարածքներ) շրջածախ առևտուր իրականացնելու թույլտվությունը տրամադրում է Երևանի քաղաքապետը կամ նրա որոշմամբ վարչական շրջանի ղեկավարը: Այս կապակցությամբ պարզ չէ՝ ինչու է շրջիկ առևտրի կետերի միջոցով առևտուր իրականացնելու թույլտվությունը նախատեսվում տրամադրել Երևանի քաղաքապետի կողմից, իսկ շրջածախ առևտուր իրականացնելու թույլտվությունը՝ Երևանի քաղաքապետի կամ նրա որոշմամբ վարչական շրջանի ղեկավարի կողմից: Ուստի գտնում ենք, որ թույլտվություն տալու ընթացակարգի միասնականությունն ապահովելու նպատակով դրանք պետք է տրամադրվեն միևնույն մարմնի կողմից:

2. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է օրենքի 158-րդ հոդվածի վերնագիրը լրացնել «շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպչի կամ ծառայություն մատուցողի» բառերով, մինչդեռ նույն նախագծի 2-րդ հոդվածով օրենքի 158-րդ հոդվածում լրացումներ են կատարվում ոչ միայն շրջիկ առևտրի կետերի, այլև

շրջածախ առևտրի միջոցով իրականացվող առևտրի վերաբերյալ, ուստի համապատասխան դրույթներն անհրաժեշտ է արտացոլել նաև լրացվող 158-րդ հոդվածի վերնագրում:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ Երևանի քաղաքապետարանի կողմից դեռևս 1 տարի առաջ մշակվել և քննարկվել են «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթ: Երևանի քաղաքապետարանի կողմից մշակված և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած նախագծերի փաթեթները նույնաբովանդակ են, բացառությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի ներկայացրած նախագծի այն դրույթի, ըստ որի՝ շրջիկ առևտրի կետերով կարող են մատուցվել նաև ծառայություններ:

Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ իրականացվել է շրջիկ առևտրի կետերի տեղակայման և այլ պահանջների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքների ամփոփումից պարզվել է, որ և՛ ԱՄՆ-ում, և՛ ԵԱՏՄ, և՛ ԵՄ երկրներում մեծ տարածում ունի շրջիկ առևտրի կետերի տրամադրումը աճուրդով, վիճակահանության կամ մրցութային եղանակով, որը հավասար մրցակցային պայմաններ է ստեղծում տնտեսավարողների համար: Ներկայումս Երևանի քաղաքապետարանի ներկայացրած լրամշակված նախագծերը քննարկման փուլում են:

Ներկայացված դիտողությունների հետ միաժամանակ առաջարկում ենք «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող օրենքի՝

1) 5.2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման գործունեությունն իրականացնում են միայն իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը՝ Երևանի քաղաքապետի կողմից տրամադրված թույլտվության հիման վրա: Թույլտվության տրամադրման, մերժման կարգը և պայմանները սահմանում է Երևան համայնքի ավագանին:».

2) 5.2-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները և վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների տեսակները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործու-նեության իրականացման թույլատրելի ժամերը սահմանվում են Երևան համայնքի ավագանու որոշմամբ: Շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը տրամադրվում են (հատկացվում են) բացառապես Երևանի քաղաքապետարանի

կողմից հատուկ այդ նպատակով ստեղծված կայքէջի միջոցով՝ էլեկտրոնային ամրագրման եղանակով, իսկ դրանց հատկացման տևողությունը չի կարող գերազանցել օրական 14 ժամը և առավելագույնը մինչև ժամը 23:00:».

3) օրենքի 5.2-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Շրջիկ առևտրի իրականացման համար նախատեսված թույլատրելի վայրերը գծանշվում են և նշանով կահավորվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ սահման-ված կարգով: Նշված վայրերում կարող են կայանել միայն համապատասխան թույլտվություն ունեցող շրջիկ առևտրի կետերը, որոնք շրջիկ առևտրի իրականացման համար տրամադրված (հատկացված) վայրը պարտավոր են ազատել սահմանված ժամը լրանալուց հետո».

4) 5.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագ-րությամբ.

«1. Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցիչն իրավունք ունի սույն օրենքի 5.2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշմամբ սահմանված վայրերում կայանած շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը տեղափոխելու դրա համար նախատեսված հատուկ տարածք (այսուհետ՝ հատուկ տարածք), եթե՝

1) շրջիկ առևտրի կետը չունի սույն օրենքի 5.2-րդ հոդվածի 1-ին մասով նախա-տեսված թույլտվություն կամ շրջիկ առևտրի թույլտվություն ստացած անձը սահմանված ժամը լրանալուց հետո չի ազատել շրջիկ առևտրի իրականացման համար տրամադրված (հատկացված) վայրը.

2) տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ դրա փաստացի տիրապետողը անհապաղ չի ազատում տարածքը կամ բացակայում է նշված տարածքից:

2. Շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի տեղափոխումը հատուկ տարածք իրականացվում է մեկ այլ տրանսպորտային միջոցի օգնությամբ»:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված նախագծերի փաթեթը լրամշակման կարիք ունի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

12 նոյեմբերի 2019 թվականի N 1673 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-324-23.10.2019-ՏՏԳԲ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 12
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-324-23.10.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Առևտրի և ծառայությունների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«շրջիկ առևտրի կետեր՝ ապրանքների պահման և մանրածախ առևտրի, ինչպես նաև ծառայությունների մատուցման համար համապատասխան սարքավորումներով ապահովվածմիայն ավտոմոբիլներ և/կամ դրանց կցորդներ.»:

Հոդված 2. Օրենքը լրացնել նոր՝ 5.2., 5.3. և 5.4. հոդվածներով.

«*Հոդված 5.2. Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերի միջոցով վաճառքի կազմակերպումը կամ ծառայության մատուցումը*

1. Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման գործունեությունն իրականացնում են միայն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը՝ Երևանի քաղաքապետի կողմից տրամադրված թույլտվության հիման վրա:

2. Շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները և վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների տեսակները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը սահմանվում են Երևան համայնքի ավագանու որոշմամբ:

3. Շրջիկ առևտրի իրականացման համար նախատեսված թույլատրելի վայրերը գծանշվում են և նշանով կահավորվում են Երևանի քաղաքապետի որոշմամբ սահմանված կարգով: Նշված վայրերում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամերի ընթացքում կարող են կայանել միայն համապատասխան թույլտվություն ունեցող շրջիկ առևտրի կետերը:

4. Շրջիկ առևտուր իրականացնողները պետք է ապահովեն պայմաններ՝ վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների սանիտարական կանոններին և նորմերին համապատասխան անվտանգությունը և որակը պահպանելու համար:

5. Երևան համայնքի վարչական տարածքում ցանկացած տեսակի տրանսպորային միջոցից և/կամ դրանց կցորդներից ցանկացած ապրանքի վաճառք իրականացնելը կամ որևէ ծառայություն մատուցելը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, արգելվում է:

Հոդված 5.3. Շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելը

1. Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցիչը իրավունք ունի սույն օրենքի 5.2. հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշմամբ սահմանված վայրերում կայանած շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը տեղափոխելու դրա համար նախատեսված հատուկ տարածք (այսուհետ՝ հատուկ տարածք), եթե.

1) շրջիկ առևտրի կետը չունի սույն օրենքի 5.2.-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված թույլտվություն և Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցչի պահանջով դրա

սեփականատերը կամ փաստացի տիրապետողը անհապաղ չի դադարեցնում վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման գործունեությունը և չի ազատում տարածքը կամ բացակայում է տարածքից.

2) տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ դրա փաստացի տիրապետողը Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցչի պահանջով անհապաղ չի ազատում տարածքը կամ բացակայում է տարածքից:

2. Շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի տեղափոխումը հատուկ տարածք իրականացվում է մեկ այլ տրանսպորտային միջոցի օգնությամբ:

3. Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցիչը կազմում է շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու վերաբերյալ արձանագրություն, որի կրկնօրինակը հանձնում կամ ուղարկում է շրջիկ առևտրի կետի կամ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջը՝ վերջինիս վերաբերյալ տեղեկատվություն ունենալու դեպքում և Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, ինչպես նաև համապատասխան հայտարարություն է տեղադրվում www.yerevan.am կայքում:

4. Շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածքում պահպանելու ժամկետը հաշվվում է օրերով և ժամերով՝ սկսած հատուկ տարածքում այն տեղափոխելու պահից:

5. Շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը սահմանում է Երևան համայնքի ավագանին:

6. Շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու և այնտեղ պահպանելու համար գանձվում է վճարներ, որոնց չափը սահմանում է Երևան համայնքի ավագանին:

7. Հատուկ տարածք տեղափոխված շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը դրա սեփականատիրոջը կամ նրա լիազորած անձին հանձնվում է, այդ մասին արձանագրություն կազմելուց հետո հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծախսերն ամբողջությամբ փոխհատուցելուց հետո:

8. Շրջիկ առևտրի կետերի կամ տրանսպորտային միջոցների օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառված չլինելու դեպքում դրանց փաստացի սեփականատերը կրում է իր սեփականության իրավունքը համապատասխան ապացույցներով հիմնավորելու պարտավորություն:

Հոդված 5.4. Երևան համայնքի վարչական տարածքում շրջածախ առևտուր իրականացնելը

1. Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և այլ ընդհանուր օգտագործման տարածքներ) շրջածախ առևտուր իրականացնելու թույլտվությունը տրամադրում է Երևանի քաղաքապետը կամ նրա որոշմամբ վարչական շրջանի ղեկավարը:

2. Շրջածախ առևտրի իրականացմանը ներկայացվող պահանջներ, պայմաններ, շրջածախ առևտուր իրականացնելու միջոցով վաճառվող ապրանքների տեսակները և շրջածախ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը սահմանում է Երևան համայնքի ավագանին:»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» պարբերությունում «մասով» բառից հետո լրացնել «5.2.-րդ հոդվածի 1-4-րդ մասերով և 5.3-րդ հոդվածով» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-324[1]-23.10.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետև՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 25.1-րդ, 25.2-րդ և 25.3-րդ կետերով.

«25.1) սահմանում է շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները և վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների տեսակները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը.

25.2) սահմանում է շրջիկ առևտրի կետերի կամ տրանսպորտային միջոցների հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերի կամ տրանսպորտային միջոցների հատուկ տարածք տեղափոխման և պահպանման համար վճարների չափը.

25.3) սահմանում է Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և այլ տարածքներ) շրջածախ առևտրի իրականացմանը ներկայացվող պահանջները, պայմանները, շրջածախ առևտուր իրականացնելու միջոցով վաճառվող ապրանքների տեսակները և շրջածախ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը»:

Հոդված 2. Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 4.3-րդ, 4.4-րդ և 4.5-րդ կետերով.

«4.3) սահմանված կարգով տալիս է Երևան քաղաքում շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվություն.

4.4) սահմանում է շրջիկ առևտրի իրականացման համար նախատեսված թույլատրելի վայրերը գծանշման և նշանով կահավորման կարգը.

4.5) սահմանված կարգով տալիս է Երևանում շրջածախ առևտուր իրականացնելու թույլտվություն»:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-324[2]-23.10.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) 158-րդ հոդվածի վերնագրում «կատարողի» բառից հետո լրացնել «շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպչի կամ ծառայություն մատուցողի» բառերը:

Հոդված 2. Օրենքի 158-րդ հոդվածի 13-րդ պարբերությունում «կրպակներում» բառից հետո լրացնել «ինչպես նաև շրջիկ առևտրի կետերում և շրջածախ առևտրի միջոցով» բառերը, իսկ 14-րդ պարբերությունում «վայրերում» բառից հետո լրացնել «ինչպես նաև շրջիկ առևտրի կետերում և շրջածախ առևտրի միջոցով» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 169.16-րդ հոդվածը «առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:» պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություններով.

«Երևան համայնքի վարչական տարածքում առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման գործունեություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Երևան համայնքի վարչական տարածքում ցանկացած տեսակի տրանսպորտային միջոցից և/կամ դրանց կցորդներից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ցանկացած ապրանքի վաճառք իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Երևան համայնքի վարչական տարածքում առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պահանջների կամ պայմանների խախտմամբ շրջածախ առևտուր իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-324³-23.10.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Հոդված 1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-185 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 21-րդ և 22-րդ կետերով.

«21) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևան համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվության համար.

22) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևան համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ շրջածախ առևտրի իրականացման թույլտվության համար»:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 21-րդ և 22-րդ կետերով.

«21) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևան համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամսվա համար՝ հիսուն հազար դրամ.

22) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևան համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ շրջածախ առևտրի իրականացման թույլտվության համար՝ մեկ անձը օրական հինգ հարյուր դրամ»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են օրենքով օգտագործվող հիմնական հասկացությունները, որոնց համաձայն՝ առևտրի իրականացման տեսակներ են նաև շրջիկ և շրջածախ առևտուրը:

Երևան քաղաքում ներկայումս, ի թիվս առևտրի կազմակերպման և ծառայությունների մատուցման մյուս տեսակների, առևտուր է իրականացվում կամ ծառայություններ են մատուցվում նաև շրջիկ առևտրի կետերի և շրջածախ առևտրի իրականացման միջոցով, որոնց վերաբերյալ, սակայն, առկա չեն օրենսդրական համապատասխան կարգավորումներ: Մասնավորապես, սահմանված չեն շրջիկ առևտրի կետերի գործունեության և շրջածախ առևտրի իրականացման համար թույլատրված վայրերը, դրանց իրականացման ժամերը, առևտրի կետերին ներկայացվող պահանջներն ու պայմանները և մի շարք այլ հարցեր: Օրենսդրորեն ամրագրված չեն նաև դրանց խախտման համար համապատասխան վարչական ներգործության միջոցները:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը վերոնշյալ բնագավառը կանոնակարգելու նպատակ է հետապնդում, ուստի նախատեսում է սահմանել սույն իրավահարաբերությունները կարգավորող նորմեր: